Տնային օժանդակ ծառայություններ (IHSS)ծրագրի ծառայությունները

Տնային օժանդակ ծառայությունների (IHSS) ծրագիրը վճարովի աջակցություն է տրամադրում եկամտիիրավասություն ունեցող ծեր, կույր և/կամ հաշմանդամության խնդիրներով անհատներին՝ իրենց սեփական տներումապահով մնալու համար, և առաջարկում է հետևյալ ծառայությունները՝

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ.Կենցաղային ընդհանուր աշխատանքներ՝ տան մաքրությունը պահպանելու նպատակով:

Առնչվող ծառայություններ՝

- **Կերակրի պատրաստում**՝պատրաստել, եփել սննդամթերքը և մատուցել կերակուրները:
- **Մաքրում կերակրից հետո**՝մաքրել պատրաստելու/եփելու տարածքը և լվանալ, չորացնել և տեղավորել/դասավորել խոհանոցային պարագաները:
- **Ամենօրյա լվացք**՝լվանալ, չորացնել, հարդարել/ծալել և տեղավորել հագուստը և սպիտակեղենը:
- **Սննդամթերքի գնում**՝կազմելսննդամթերքի ցանկ, խանութ գնալ/վերադառնալ, կատարել գնումներ, բերել և տեղավորել գնված մթերքը:
- **Այլ գնումներ/հանձնարարություններ**՝ներառում է այլ անհրաժեշտ իրերի/ պարագաների գնումները,և փոքր ու անհրաժեշտ հանձնարարությունների կատարումը (օրինակ՝ վերցնել դեղատոմսը):

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՈՉ-ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

- **Շնչառություն/աջակցություն**՝ծառայություն ստացողինաջակցելշնչառությանն առնչվող ոչ-բժշկական ծառայություններով, ինչպիսիք են՝թթվածնի ինքնուրույն կարգավորումը, նեբուլայզերի ինքնուրույն օգտագործումը և շնչառության սարքերի մաքրումը:
- **Աղիքների և միզապարկի խնամք**՝աջակցություն օգտվել զուգարանից (այդ թվում՝ տանել/դուրս բերել), տականոթից /անկողնուն կից կամոդից կամ միզարանից; դատարկել և մաքրել ստոմայիպարկը, հոգնայի բալոնը և/կամ կաթետրային խցիկները;կիրառել տակդիրներ, մեկ անգամյա օգտագործման ներքնազգեստ և մեկ անգամյա օգտագործման միջադիրներ;սրբել և մաքրել ծառայություն ստացողին, և լվանալ/չորացնել ծառայություն ստացողի և մատակարարի ձեռքերը:
- **Կերակրում**՝օգնել ծառայություն ստացողին սնվելիս, մաքրել նրա երեսը և ձեռքերը ուտելուց առաջ/հետո:

- **Ամենօրյա անկողնային լոգանքներ՝** անկողնուն գամված ծառայություն ստացողին տրամադրել ամենօրյա լոգանք՝ լողացնելովսպունգի միջոցով։
- **Հագ ու կապ՝** օգնել ծառայություն ստացողին հագնել և հանել իր հագուստը օրվա ընթացքում, ըստ անհրաժեշտության։
- **Խնամք դաշտանային ցիկլի ժամանակ՝** օգնել հիգիենիկ անձեռոցիկների և միջադիրների արտաքին տեղադրման գործում։
- **Տեղաշարժ և մուտք/ելք տրանսպորտային միջոց/-ից՝** օգնել ծառայություն ստացողին քայլել կամ տեղաշարժվել տան մեջ, այդ թվում՝ դեպի զուգարան և դուրս, դեպիմեքենա և հետ, և նստել մեքենա/դուրս գալ՝ բժշկական այցելությունների և/կամ այլընտրանքային ռեսուրսների համարփոխադրման նպատակով։
- **Տեղափոխում (տեղաշարժվելանկողնում/անկողնուց դուրս և/կամնստատեղում/նստատեղից)՝** օգնել ծառայություն ստացողին կանգնած, նստած կամ պառկած դիրքից այլ դիրքի անցնելիս և/կամ կահույքի կամ սարքավորման մի կտորից մյուսին անցնելիս։
- **Լոգանք, բերանի խոռոչի հիգիենա, և մազերի խնամք՝** օգնել ծառայություն ստացողին լոգանք կամ ցնցուղ ընդունելիս, ատամները լվանալիս, ատամնաթելով մաքրելիս, և պրոթեզները մաքրելիս, մազերը շամպունով լվանալիս, չորացնելիս և սանրելիս, թրաշվելիս և լոսյոն, դիմափոշի և դեզոդորանտ օգտագործելիս։
- **Դիրքի փոփոխում և մաշկի մերսում՝** կատարել մաշկի մերսում արյան շրջանառությունը լավացնելու և/կամ մաշկի վատթարացումը կանխելու համար, օգնել անկողնում շրջվել և կատարել դիրքի այլ փոփոխություններ, շարժման վարժություններ, օգնել քայլելիս և կատարել ամրապնդող վարժություններ։
- **Խնամք և օգնություն կապված պրոթեզային սարքերի և դեղորայքի հետ՝** կատարել պրոթեզային սարքերի, այդ թվում՝ տեսողության /լսողական սարքերի, հանում/տեղադրում և պահպանում, ծառայություն ստացողին հիշեցնել ընդունել դեղատոմսով և/կամ առանց դեղատոմսի դեղերըև դասավորել դեղորայքի տուփերը։

<u>ՈՒՂԵԿՑՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ՝</u>

Ապահովելծառայություն ստացողի փոխադրումը բժշկական այցելությունների և ետ, և ծառայություն ստացողի հետ սպասել բժիշկների, ատամնաբույժների և առողջապահական ոլորտի այլ պրակտիկաներով զբաղվողների հետ հանդիպումներին; կամփոխադրել հաստատություններ՝ առողջությանն առնչվող անհրաժեշտ սարքավորումների/սարքերի տեղադրման և հատուկ հանդերձանքի համար, և որոնց տրամադրումը կարող է թույլատրվել IHSS ծառայություն ստացողին, միայն այն դեպքում, եթե ոչ-շտապ բժշկական փոխադրումը (NEMT) չի հանդիսանում Medi-Calծրագրի մատակարար, և միայն այն դեպքերում, երբ սոցիալական աշխատողը պարզել է, որ ծառայություն ստացողը Medi-Calծրագրի շրջանակում օգտվում է NEMT-ից, սակայն ծառայություն ստացողին նաև անհրաժեշտ էIHSSկողմից լիազորված հանձնարարությամբ աջակցություն՝ լինի դա փոխադրման ժամանակ կամ առողջապահական ոլորտի մասնագետի հետ հանդիպման վայրում։

ՀԱՏՈՒԿ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ՝

- **Մանրակրկիտ մաքրում՝** տան մանրակրկիտ մաքրում՝ վտանգավոր աղբի կամ կեղտի հեռացման նպատակով: Թույլատրվում է միայն մեկ անգամ և միայն որոշակի հանգամանքներում:
- **Բակային վտանգների նվազեցում՝** թեթև աշխատանք բակում՝ բարձր խոտը կամ մոլախոտերը և աղբըհեռացնելու համար, երբ այդ նյութերը հրդեհի վտանգ են ներկայացնում(թույլատրվում է միայն մեկ անգամ), կամ սառույցը, ձյունը կամ այլ վտանգավոր նյութերը մուտքերից և հիմնական քայլուղիներիցհեռացնելու համար, երբ դրանք վտանգավոր են դարձնում տան մուտքը:
- **Պաշտպանիչ վերահսկում՝** հատուցում հոգեկան խանգարում ունեցող անհատին հսկելու, անհատի անվտանգությունն ու վնասվածքներից և պատահարներից զերծ պահելու համար: Կիրառվում են որոշ սահմանափակումներ:
- **Ուսուցում և ցուցադրում՝** IHSS մատակարարների կողմից տրամադրվող ծառայությունների ուսուցում և ցուցադրում, այնպես, որ ծառայություն ստացողը կարողանա ինքնուրույն կատարելIHSS մատակարարների կողմից ներկայումս տրամադրվող այդ ծառայությունները: Կիրառվում են որոշ սահմանափակումներ: Այս ծառայությունը սահմանափակվում է մինչև երեք ամիս, միայն մեկ անգամ:
- **Պարաբժշկական ծառայություններ՝** առողջապահական ոլորտի լիցենզավորված մասնագետի կողմից պատվիրված ծառայություններ, որոնք ծառայություն ստացողները կարող էին կատարել ինքնուրույն, եթե չունենային ֆունկցիոնալ սահմանափակումներ: Քանի որ այդպիսի ծառայություններն անհրաժեշտ են ստացողի առողջությունը պահպանելու համար, պարաբժշկական ծառայությունները ներառում են գործողություններ, ինչպիսիք են՝ դեղորայքի ընդունումը, արյան մեջ շաքարի պարունակության ստուգումը, ինսուլինի ներարկումները, բժշկական սարքի տեղադրումը մարմնի բացվածքում,ստերիլիզացում պահանջող գործողությունները; կամ ֆունկցիայի բարելավման համար մի շարք շարժումների կատարումը: Կիրառվում են հատուկ սահմանափակումներ:

Լրացուցիչ տեղեկությունների համար կապվել IHSSտեղային գրասենյակի հետ: